ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1507-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2010.12.01/28(380) Հոդ.371	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Կրթության և գիտության նախարար	*Ընդունման ամսաթիվը*	14.10.2010
Ստորագրող մարմինը	Կրթության և գիտության նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	14.10.2010
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.12.2010	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 78-Մ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 04-Ն ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 39-Ն ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
15 նոյեմբերի 2010 թ.
Պետական գրանցման թիվ 11010425

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

14 հոկտեմբերի 2010 թ. N 1507-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 78-Մ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 04-Ն ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 39-Ն ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 10.09.12 N 833-Ն)

Հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30 հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթները և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Էքստեռն (դրսեկություն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 1998 թվականի մարտի 25-ի «Էքստեռն ավարտական քննություններ անցկացնելու համար» N 78-Մ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հունվարի 10-ի «Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանցիներին էքստեռն փոխադրական քննություններին թույլատրելու համար կազմակերպվող հարցազրույցի չափորոշիչները հաստատելու և ՀՀ ԿԳ նախարարի 2001 թվականի դեկտեմբերի 21-ի N 556-Մ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 04-Ն և 2007 թվականի հունվարի 29-ի «Էքստեռն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը հաստատելու մասին» N 39-Ն հրամանները:

(2-րդ կետը խմբ. 10.09.12 N 833-Ն)

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Ն. Հովհաննիսյանին և իրավաբանական վարչության պետ Մ. Գրիգորյանին՝ հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

Ա. Աշոտյան

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թ. հոկտեմբերի 14-ի
N 1507-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցի՝ անկախ ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից (այսուհետ՝ դպրոց) սովորողի համար դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական քննություններ, ինչպես նաև հիմնական և միջնակարգ կրթական ծրագրերին համապատասխան՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ (այսուհետ՝ էքստեռն) կազմակերպելու հետ կապված իրավահարաբերությունները:

II. ԷՔՍՏԵՌՆ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Դպրոցի սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ (հանրակրթական ծրագրի յուրացման նորմատիվ ժամկետների փոփոխություն) կազմակերպվում են՝ ելնելով սովորողի կողմից հանրակրթական ծրագրերի յուրացման մակարդակից:

3. Էքստեռն փոխադրական քննություններ կազմակերպվում են դպրոցների 1-ից 8-րդ դասարանների բացառապես այն սովորողների համար, ովքեր նախորդ (բացառությամբ 1-ին դասարանի) դասարանի տարեկան, տվյալ դասարանի ընթացիկ և առաջին կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից ունեցել են գերազանց առաջադիմություն (տարեկանում՝ 9 կամ 10 միավոր, քննական՝ 10 բալային համակարգում 9 կամ 10 միավոր, իսկ 20 բալային համակարգում՝ 18, 19 կամ 20 միավոր), հիմնական կրթության գերազանցության վկայական, ինչպես նաև՝ 10-րդ դասարանների փոխադրական քննություններից գնահատվել են 9 կամ 10 միավոր՝ պահպանելով սույն կարգի 7-րդ կետի պահանջները:

4. «Տեխնոլոգիա», «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը չի կարող արգելք հանդիսանալ էքստեռն կարգով քննություններ հանձնելուն:

5. Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում դպրոցի սովորողը դասարանից դասարան վաղաժամկետ կարող է փոխադրվել միայն մեկ անգամ:

6. Առաջին և երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող դպրոցի ավարտական դասարանների սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ չեն կազմակերպվում:

7. Միջազգային օլիմպիադաներում (առարկայական, սպորտային), մրցաշարերում, առաջնություններում,

փառատոներում մասնակցություն ունենալու դեպքում երրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի սովորողների համար, նրանց ցանկության դեպքում, կազմակերպվում են էքստեռն փոխադրական քննություններ՝ պահպանելով սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները:

8. Սովորողի համար էքստեռն փոխադրական քննությունները կազմակերպվում են հետևյալ ընթացակարգով.

1) մինչև տվյալ ուսումնական տարվա հունվարի 10-ը սովորողի ծնողը, դաստիարակը և առնվազն 3 դասավանդող ուսուցիչ համատեղ գրավոր դիմում են ներկայացնում դպրոցի տնօրենին՝ սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու առաջարկով, որը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկվում է դպրոցի մանկավարժական խորհրդի նիստում,

2) սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերի պահանջների ապահովման դեպքում մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում՝ թույլատրել սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրման քննություններին մասնակցելու մասին,

3) դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի որոշումը և սովորողի առաջադիմության վերաբերյալ փաստաթղթերը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն):

(8-րդ կետը փոփ. 15.01.20 N 01-Ն)

9. Մանկավարժական խորհրդի կողմից դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրման երաշխավորված սովորողը՝ անկախ դպրոցի ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից, Երևան քաղաքում կենտրոնացված կարգով հանձնում է փոխադրական քննություններ.

1) 1-6-րդ դասարաններում՝ «Մայրենի» և «Մաթեմատիկա», 7-8-րդ դասարաններում՝ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն), իսկ 10-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն), «Հայոց պատմություն» առարկաներից:

2) Քննություններն անցկացվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը նախագահում է Նախարարը կամ Նախարարի տեղակալը:

3) Փոխադրական քննություններն (գիտելիքների ստուգումը) անցկացվում են տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի և հաջորդ դասարանի 1-ին կիսամյակի ուսումնական պլաններով նախատեսված բոլոր առարկաների ծրագրային նյութի շրջանակներում:

4) Քննությունների թեստերը կազմվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից:

Թեստերը փակ ծրարով ներկայացվում են Նախարարություն՝ առնվազն 15-ական առաջադրանք՝ սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված առարկաներից՝ ըստ քննություններին ներկայացված հայտերի քանակի:

(9-րդ կետը փոփ., խմբ. 15.01.20 N 01-Ն)

10. Քննություններն անցկացվում են Նախարարության կողմից ընտրված դպրոցում, Նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով՝ հունվարի 20-26-ը ընկած ժամանակահատվածում:

11. Կենտրոնացված փոխադրական քննություններն անցկացնող հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում սովորողն իրավունք է ստանում հանձնել տվյալ դասարանի ուսումնական պլանով նախատեսված մնացած առարկաների քննությունները, որոնք անցկացվում են սովորողին երաշխավորած դպրոցում՝ դպրոցի տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից:

12. Սույն կարգի 11-րդ կետում նշված քննությունները կազմակերպվում են հունվարի 27-ից փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ առարկայական մեթոդական միավորումների կողմից կազմած քննական առաջադրանքներով:

13. Սույն կարգի 12-րդ կետում նշված ժամանակահատվածում հանձնվող քննությունների ժամանակացույցը ներկայացվում է լիազոր մարմնին և Նախարարություն:

1) «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», բնագիտական առարկաներից և օտար լեզուներից քննություններն անցկացվում են գրավոր, իսկ մնացած առարկաների քննությունները՝ ըստ մանկավարժական խորհրդի որոշման:

2) Փոխադրական բոլոր քննություններից 10 բալային համակարգում 9-10 միավոր գնահատվելու դեպքում դպրոցի մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու մասին:

14. Դպրոցում կազմակերպվող փոխադրական քննություններին կարող են մասնակցել Նախարարի լիազոր ներկայացուցիչը, ՀՀ մարզերում՝ տարածքային կառավարման մարմնի, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության վարչությունների ներկայացուցիչները:

15. Դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա սովորողին հրամանով փոխադրում է հաջորդ դասարան և հնգօրյա ժամկետում տեղեկացնում Նախարարությանը և Լիազոր մարմնին:

16. Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների քննական գնահատականները համարվում են կիսամյակային և տարեկան գնահատականներ:

III. ԷՔՍՏԵՌՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17. Էքստեռն ավարտական քննությունները կազմակերպվում են կրթական 2-րդ և 3-րդ աստիճանների հանրակրթական հիմնական, ընդհանուր ծրագրերին համապատասխան:

18. Էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստանալու համար կարող է դիմել մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 16 տարին լրացած (լրացող) անձը (այսուհետ՝ դրսեկ):

19. Էքստեռն կարգով միջնակարգ կրթության ատեստատ կարող է ստանալ.

1) էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստացած և 18 տարին լրացած դրսեկը՝ էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստանալու տարվա՝ սույն կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված 3-րդ քննաշրջանից սկսած,

2) հիմնական կրթության վկայական ունեցող անձը, եթե վկայական ստանալու տարվանից անցել է 4 և ավելի տարի (տարիների հաշվարկը կատարվում է ուսումնական պարապմունքների ավարտման օրվանից)՝ 23-րդ կետով սահմանված առաջին, երկրորդ և երրորդ քննաշրջաններում:

20. Էքստեռն ավարտական քննությունները կազմակերպվում են Երևան քաղաքում՝ Նախարարության կողմից էքստեռն ավարտական քննություններ կազմակերպելու իրավունք ստացած ավագ դպրոց(ներ)ում:

21. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դրսեկների համար էքստեռն ավարտական քննություններ կազմակերպվում են Նախարարության կողմից ընտրված դպրոց(ներ)ում:

22. Ինքնակրթությամբ զբաղված անձը, ցանկության դեպքում, կարող է գրավոր դիմել որևէ ավագ դպրոց՝ քննական առարկաներից վճարովի հիմունքներով լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու խնդրանքով:

23. Հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար էքստեռն ավարտական քննությունները կազմակերպվում են 3 քննաշրջաններով.

1) 1-ին քննաշրջան՝ փետրվարի 15-ից մարտի 15-ը ներառյալ՝ ըստ Նախարարի հաստատած ժամանակացույցի:

2) 2-րդ քննաշրջան՝ ավարտական և պետական ավարտական քննությունները՝ ըստ ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակացույցի, մյուս առարկաները՝ ըստ Նախարարի հաստատած ժամանակացույցի:

3) 3-րդ քննաշրջան՝ հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 15-ը ներառյալ՝ ըստ Նախարարի հաստատած ժամանակացույցի:

24. Ավարտական փաստաթուղթ ստանալու համար դրսեկը կամ նրա օրինական ներկայացուցիչը դիմում է ներկայացնում սույն կարգի 20-րդ կետում նշված ավագ դպրոցի տնօրենին՝ յուրաքանչյուր քննաշրջանից 30 աշխատանքային օր առաջ:

25. Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) հիմնական կրթության վկայական ստանալու համար՝

ա. անձը հաստատող փաստաթուղթ,

բ. տեղեկանք նախնական կրթության մասին՝ առկայության դեպքում,

գ. սույն կարգի 35-րդ կետով նախատեսված տեղեկանքը՝ առկայության դեպքում.

2) միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար՝

ա. անձը հաստատող փաստաթուղթ,

բ. հիմնական կրթության վկայական (բնօրինակը),

գ. սույն կարգի 35-րդ կետով նախատեսված տեղեկանքը՝ առկայության դեպքում:

26. Էքստեռն ավարտական քննություններ հանձնող դրսեկը կամ նրա օրինական ներկայացուցիչը դիմումում նշում է, թե տվյալ քննաշրջանում քանի՞ քննություն է ցանկանում հանձնել և ո՞ր առարկաներից (պահպանելով սույն կարգի 20-րդ կետի պահանջները):

27. Փաստաթղթերը ներկայացվում են մեկ անգամ՝ բոլոր քննաշրջանների համար:

28. Փաստաթղթերի ընդունումն ավարտվում է քննաշրջանը սկսվելուց 10 աշխատանքային օր առաջ:

29. Էքստեռն քննություններ կազմակերպող ավագ դպրոցը փոխվելու դեպքում փաստաթղթերի պատճենները փոխանցվում են նոր դպրոցի տնօրենին:

30. Փաստաթղթերի պատճենները փոխանցող ավագ դպրոցի տնօրենը պատշաճ կերպով տեղեկացնում է այդ մասին դրսեկին կամ նրա օրինական ներկայացուցչին:

31. Սույն կարգի պահանջներին համապատասխանող Էքստեռն քննություններ հանձնել ցանկացողների փաստաթղթերը դպրոցի տնօրենը քննաշրջանը սկսվելուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ ներկայացնում է Նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչություն՝ փաստաթղթերի ուսումնասիրության և սահմանված կարգին համապատասխան քննություններին թույլատրելու համար:

32. Գրավոր քննությունների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից և տրամադրվում են Նախարարությանը, բանավոր քննությունների առաջադրանքները՝ դպրոցի համապատասխան առարկայական մեթոդական միավորումների կողմից:

33. Էքստեռն քննություններ հանձնող դրսեկները քննական անբավարար գնահատականներ ստանալու դեպքում առաջադրանքներ չեն ստանում:

34. Սույն կարգի 23-րդ կետով սահմանված 2-րդ քննաշրջանի ընթացքում որևէ պատճառով քննություններին չներկայացած դրսեկը ավարտական և պետական ավարտական քննությունները հանձնում է ԳԹԿ-ի սահմանած օրերին:

1) 1-ին, 2-րդ կամ 3-րդ քննաշրջաններում որևէ պատճառով որևէ քննության չմասնակցած դրսեկը տվյալ քննությունը հանձնում է հաջորդ տարիներին՝ երեք քննաշրջանների ընթացքում:

35. Էքստեռն ավարտական քննություններ հանձնած դրսեկին սույն կարգի 20-րդ կետում նշված դպրոցի տնօրենը տրամադրում է տեղեկանք՝ գնահատման 10 միավորային համակարգում՝ 4-10, 20 միավորային համակարգում՝ 8-20 միավոր ստանալու վերաբերյալ:

36. Դրսեկի ստացած գնահատականները ուժի մեջ են մինչև հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալը:

37. Դրսեկը հաջորդ քննաշրջաններին քննություն է հանձնում միայն այն առարկաներից, որոնցից քննություն չի հանձնել կամ գնահատման 20 բալային համակարգում ստացել է 1-7, 10 միավորային համակարգում՝ 1-3 միավորներ:

38. Քննությունների հանձնաժողովները կազմում է (են) էքստեռն քննություններ անցկացնելու իրավունք ստացած դպրոց(ներ)ի տնօրեն(ներ)ը.

1) 9-րդ դասարանի համար՝ նախագահ և հանձնաժողովի երկու անդամ,

2) 12-րդ դասարանի համար՝ նախագահ և հանձնաժողովի երեք անդամ:

39. Էքստեռն կարգով քննությունների վերահսկողությունն իրականացնում է Նախարարությունը:

40. Բոլոր քննություններից գնահատման 10 միավորային համակարգում՝ 4-10, 20 միավորային համակարգում՝ 8-20 միավոր ստացած դրսեկներին սահմանված կարգով տրվում է հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ՝ «Էքստեռն» նշումով: Նշումը կատարում է Նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը:

41. Էքստեռն ավարտողները գովասանագրով կամ մեդալով չեն պարգևատրվում:

42. Էքստեռն ավարտողներին տրված հիմնական կրթության վկայականը կամ միջնակարգ կրթության ատեստատը գրանցվում է դպրոց(ներ)ի հիմնական կրթության վկայականների կամ միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյաններում: Դպրոցի հիմնական շրջանավարտների մասին տվյալները լրացնելուց հետո, հաջորդ տողի կենտրոնում գրվում է «Էքստեռն» բառը և համարակալումը շարունակելով՝ լրացվում են սույն կարգով ավարտական վկայական ստացած դրսեկների մասին տվյալները:

43. Էքստեռն ավարտական քննությունների ամփոփագրերը և քննական գրավոր աշխատանքները պահվում են քննությունները կազմակերպող դպրոց(ներ)ում՝ դրսեկի՝ հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալուց հետո՝ 1 տարի:

(հավելվածը խմբ. 10.09.12 N 833-Ն, փոփ., խմբ. 15.01.20 N 01-Ն)